ՀԱՎԵԼՎԱԾ 3

Պետական հանրակրթական դպրոցներում ասորերեն լեզվի ուսուցում իրականացնող բնակավայրերի ցանկ

հ/հ	**դպրոց**	**երեխաների թիվը 2012թ.**	**երեխաների թիվը 2015.**
	Երևան		
1	Պուշկինի անվան թիվ 8 հ/դ	Միջնակարգ դպ. 228 /1-12 դասարան/	Հիմնական դպ. 263 /1-9 դասարան/
2	Ա.Մարգարյանի անվան թիվ 29 ա/դ	11	7
	ՀՀ Արարատի մարզ		
3	Վ. Դվինի մ/դ	188	174
4	Դիմիտրովի մ/դ	20	35
	ՀՀ Կոտայքի մարզ		
5	Արզնիի մ/դ	82	62
	ՀՀ Արմավիրի մարզ		
6	Նոր Արտագերսի մ/դ	17	16

ՏԱՐԵԹԻՎ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՔԱՆԱԿ /հատ/	ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆ/դրամ/	ԳՈՒՄԱՐ
2009թ	Քրդերեն Այբենարան	300	4500	1350000
	Եզդիերեն 6	700	4300	3010000
2010թ	Եզդիերեն 1	1000	4300	4300000
	Եզդիերեն 7	700	4300	3010000
2011թ	Եզդիերեն 2	1000	4300	4300000
	Եզդիերեն 8	700	4300	3010000
2012թ	Եզդիերեն 2	800	4300	3440000
	Եզդիերեն 8	700	4300	3010000
	Քրդերեն 2	700	3785	2649500
	Քրդերեն 3	700	3785	2649500
	Քրդերեն 4	700	3785	2649500
2013 թ	Եզդիերեն 4	1000	4250	4250000
	Եզդիերեն 5	1000	4250	4250000
	Եզդիերեն 10	1000	4250	4250000
2014թ	Եզդիերեն 1	1000	4250	4250000
	Եզդիերեն 6	1000	4250	4250000
	Եզդիերեն 7	1000	4250	4250000
	Եզդիերեն 11	1000	4250	4250000
2015	Եզդիերեն Այբենարան	1000	4250	4250000
	Եզդիերեն 2	1000	4250	4250000
	Եզդիերեն 8	1000	4250	4250000
	Եզդիերեն 12	1000	4250	4250000
	Եզդիերեն /ծրագիր 1-12/	1000	1300	1300000
	Քրդերեն 8	700	3785,7	2649990
	Քրդերեն 9	700	3785,7	2649990
	Քրդերեն /քերականություն 5-9/	700	3785,7	2649990

Ռուսերեն լեզվի ուսուցմամբ դասարաններով պետական

հանրակրթական դպրոցների ցանկ

ԵՐԵՎԱՆ

Կենտրոն համայնք

1. Վ.Մայակովսկու անվան N 7 հիմնական դպրոց
2. Ա.Պուշկինի անվան N 8 հիմնական դպրոց /ասորերենի ուսումնասիրությամբ/
3. Անդրանիկ Մարգարյանի անվան N 29 ավագ դպրոց /ասորերենի ուսումնասիրությամբ/
4. Ա.Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց

Էրեբունի համայնք

5. Ն.Գոգոլի անվան N 35 հիմնական դպրոց
6. Բ.Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոց

Նորք Նորք համայնք

7. N 62 ավագ դպրոց
8. Ս.Սաֆարյանի անվան N 164 հիմնական դպրոց

Շենգավիթ համայնք

9. Ա.Սախարովի անվան N 69 հիմնական դպրոց
10. N 97 ավագ դպրոց

Աջափնյակ համայնք

11. N 109 ավագ դպրոց
12. Ալ. Բլոկի անվավ N 122 հիմնական դպրոց

Ավան համայնք

13. Ներսես Մեծի անվան N 124 հիմնական դպրոց

Քանաքեռ-Զեյթուն համայնք

14. N 147 հիմնական դպրոց

Արաբկիր համայնք

15. Ռ.Միրոյանի անվան N 77 հիմնական դպրոց
16. Հ.Իսակովի անվան N 132 հիմնական դպրոց
17. Վ.Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց

Մալաթիա-Սեբաստիա համայնք

18. Գ.Մահարու անվան N 176 հիմնական դպրոց
19. Ս.Խանզադյանի անվան N 184 ավագ դպրոց

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

20. Արտաշատի ավագ դպրոց
21. Գյուղ Վերին Դվինի միջն./դպրոց
22. Գյուղ Դիմիտրովի միջն./դպրոց

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

23. Արմավիրի N 4 ավագ դպրոց
24. Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց
25. Վաղարշապատի Մ.Գորկու անվան N 5 ավագ դպրոց
26. Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N 9 հիմնական դպրոց

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

27. Սևանի Վ.Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոց
28. Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

29. Վանաձորի Ա.Պուշկինի անվան N 4 հիմնական դպրոց
30. Վանաձորի Ա.Գրիբոյեդովի անվան N 11 ավագ դպրոց
31. Գյուղ Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոց
32. Գյուղ Լերմոնտովոյի միջնակարգ դպրոց
33. Տաշիրի ավագ դպրոց

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

34. Դիլիջանի ավագ դպրոց
35. Դիլիջանի N 2 հիմնական դպրոց

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

36. Հրազդան N 10 ավագ դպրոց
37. Հրազդան Հ.Խարոնյանի անվան N 12 հիմնական դպրոց
38. Աբովյանի N 4 ավագ դպրոց
39. Աբովյանի Ն.Վանյանի անվան N 5 հիմնական դպրոց
40. Գյուղ Արզնիի միջն.դպրոց /ասորերենի ուսումնասիրությամբ/

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

41. Գյումրու N 2 ավագ դպրոց
42. Գյումրու N 7 հիմնական դպրոց
43. Գյումրու N 23 հիմնական դպրոց

Պետական հանրակրթական դպրոցներում եզդիերեն/քրդերեն լեզվի ուսուցում իրականացնող բնակավայրերի ցանկ

հ/հ	Դպրոց	երեխաների թիվը	դասավանդվում է
	ՀՀ Արմավիրի մարզ		
2	Արմավիրի թ.10 մ/դ	45	եզդիերեն
3	Արգավանդի մ/դ	60	եզդիերեն
4	Երասխահունի մ/դ	109	եզդիերեն
5	Լուկաշինի մ/դ	36	եզդիերեն
6	Տանձուտի մ/դ	85	եզդիերեն
7	Առատաշենի մ/դ	40	եզդիերեն
8	Արշալույսի մ/դ	60	եզդիերեն
9	Ֆերիկի հ/դ	41	եզդիերեն
	ՀՀ Արարատի մարզ		
10	Քաղցրաշեն	31	եզդիերեն
11	Այգեզարդ	14	եզդիերեն
12	Այգեպատ	12	եզդիերեն
	ՀՀ Արագածոտնի մարզի		
13	Շամիրամի հ/դ	94	եզդիերեն
14	Ալագյազի մ/դ	75	քրդերեն
15	Սադունցի հ/դ	30	եզդիերեն
16	Ավշենի հ/դ	33	քրդերեն
17	Ճարճակիսի մ/դ	83	քրդերեն
18	Միրաքի հ/դ	11	եզդիերեն

19	Շենկանիի հ/դ	33	եզդիերեն
20	Ջամշլուի հ/դ	22	քրդերեն
21	Ռյա -Թազայի մ/դ	113	քրդերեն
22	Կանիաշիրի հ/դ	33	եզդիերեն
23	Սիփանի մ/դ	34	քրդերեն
24	Միջնատունի հ/դ	34	քրդերեն
25	Օթևանի հ/դ	0	եզդիերեն
26	Արևուտի հ/դ	17	եզդիերեն
27	Կանչի հ/դ	21	եզդիերեն
28	Թլիկի հ/դ	12	եզդիերեն
29	Հակոյի հ/դ	17	եզդիերեն
30	Դդմասարի հ/դ	18	եզդիերեն
31	Սորիկի հ/դ	17	եզդիերեն
32	Մեծաձոր հ/դ	11	եզդիերեն

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ազգային փոքրամասնությունների հետ իրականացված աշխատանքների մասին

2012թ. հունվարի 1-ից մինչև 2015թ. ապրիլի 15-ը

Կազմակերպական վարչության մասով՝

2012 թ. մարտի 8-ին ժ.13.00-15.00 «Քուրդիստան» կոմիտեին տրամադրվել է հավաքի թույլտվություն Ստ. Շահումյանի անվան հրապարակում, 2012թ. հոկտեմբերի 22-27 ժ.10.00-18.00 միջոցառման /ստորագրահավաքի/ թույլտվություն մետրոյի «Երիտասարդական» կայարանի և Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի շուկային հարակից տարածքներում, միջոցառման /ստորագրահավաքի/ թույլտվություն 2013թ. մարտի 18-28 ժ.10.00-18.00 Կոմիտասի և Նոր Նորքի շուկաների հարակից տարածքներում, միջոցառման /ծառատունկի/ թույլտվություն 2013թ. ապրիլի 4-ին ժ.12.00-16.00 «Հաղթանակ» զբոսայգում, հավաք 2014թ. մարտի 7-ին ժ.12.00-14.00 Ստ. Շահումյանի անվան հրապարակում:

Հայաստանի քրդական ազգային խորհրդին տրամադրվել է հավաքի թույլտվություն 2012թ. նոյեմբերի 9-ին ժ.12.30-14.00 Ստ. Շահումյանի անվան հրապարակում:

Եզդիների ազգային միությանը տրամադրվել է միջոցառման թույլտվություն 2014թ. հունիսի 1-ին ժ.16.00-18.00 Անգլիական այգում:

Սոցիալական ապահովության վարչության մասով՝

Սերտ համագործակցություն է ձևավորվել ազգային փոքրամասնությունների համայնքների հետ /ռուսական, ուկրաինական, բելոռուսական, գերմանական, լեհական, հունական, հրեական, քրդական, եզդիական, ասորական, վրացական/:

Համագործակցության շրջանակներում նշված համայնքների ղեկավարները հրավիրվել են քաղաքապետարան, քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Ազգային փոքրամասնությունները ներկայացնող համայնքների ներկայացուցիչները ընդգրկվել են քաղաքապետարանի կողմից 2012-2015թթ. կազմակերպված սոցիալական բնույթի գրեթե բոլոր միջոցառումներում՝

Յուրաքանչյուր տարի Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ կազմակերպված տոնածառի հանդեսներին մասնակցել են նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնոց երեխաները նույնպես:

2012-15թթ. մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված տոնական միջոցառումներին հրավիրվել են նաև ազգային փոքրամասնությունը ներկայացնող համայնքների կանայք՝ դիտել թատերական ներկայացումներ, նրանց տրամադրվել են նվերներ:

Առողջապահության վարչության մասով՝

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչների համաձայն 2012թ. հունվարի 1-ից մինչ օրս Երևանի քաղաքապետարանի առողջապահական ընկերությունների կողմից բուժսպասարկում են ստանում եզդիներ, ասորիներ, ռուսներ, ուկրաինացիներ, պարսիկներ, քրդեր, հույներ և այլ ազգային փոքրամասնություններ:

Առողջապահական ընկերություններում աշխատում են ազգային փոքրամասնություններ՝ բժիշկներ և կրտսեր բուժաշխատողներ:

Հանրակրթության վարչության մասով՝

Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում սովորում են ազգությամբ ռուս, եզդի,ուկրաինացի,բելոռուս, ասորի, արաբ, հրեա, հույն, չինացի թվով 890 ազգային փոքրամասնության ներկայացուցիչ աշակերտներ.

Աշխատակազմի հանրակրթության վարչությունը.

1.Պարբերաբար հաշվառում է ուսումնական հաստատություններում սովորող ազգային փոքրամասնության ներկայացուցիչ աշակերտներին՝ համապատասխան գրականությամբ ապահովելու համար::

2.Վերահսկում է վերոնշյալ աշակերտների՝ Երևանի քաղաքապետարանի դպրոցներ ընդունվելու, դպրոցից դպրոց տեղափոխվելու գործընթացը՝ պարտուսի ապահովման նպատակով:

3. Դպրոցներումլրացուցիչ պարապմունքներ են անցկացվում վերոնշյալ աշակերտների հետ՝ լեզվական դժվարությունների և այլ խնդիրների հաղթահարման նպատակով:

4. Պարբերաբար իրականացվում է հանդիպում նրանց ծնողների հետ, բարձրացված հարցերը քննարկելու և հնարավորինս լուծում տալու նպատակով:

5. Անցկացվում են անհատական խորհրդատվական աշխատանքներ, ուսումնասիրվում են յուրաքանչյուր երեխայի սոցիալական հարմարման, շրջապատի հետ հաղորդակցության դժվարությունները:

6.Վերոնշյալ աշակերտները ընդգրկված են արտադասարանական խմբակներում, մասնակցում են գրական-գեղարվեստական, հայրենագիտական և առհասարակ, դպրոցում իրականացվող բոլոր միջոցառումներին:

7. Մայրաքաղաքի մի շարք դպրոցներում կազմակերպվել է ազգային փոքրամասնության ներկայացուցիչների ձեռքի աշխատանքների ցուցահանդես:

8.Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ դպրոցներում աշակերտների համար կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ իրենց մայրենի լեզվով:

9.Մայրենիի օրվա կապակցությամբ դպրոցներում իրականացվել է իրենց մայրենիի փառաբանմանը նվիրված միջոցառումներ:

10. Մայիսին «Համերաշխության միջազգային օրվա» կապակցությամբ դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ՝ «Ճանանչենք Հունաստանը»,«Ես մի վրացի , իսկ դու հայ ես մի», «Ռուսիա, իմ եղբայր» և այլն վերտառություններով:

11. Հաղթանակի օրվա առթիվ իրականացվել է աշակերտների այցելությունը Եռաբլուր և Հաղթանակի այգի:

12 . Կազմակերպվել է « Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի 3-րդ փառատոնը:

13. Հանդուրժողականության միջազգային օրվա կապակցությամբ «Կարմիր խաչ» միջազգային կազմակերպության հետ կազմակերպվել են դասախոսություններ, բաց դասեր,քննարկումներ, ինչպես նաև նկարների ցուցահանդես:

14. Եզդի երեխաներ ունեցող դպրոցներում եզդիական համայնքի համագործակցությամբ կազմակերպվել է գարնանային զարթոնքի՝ Եզդիդի տոնը՝ ազգային երգուպարի ներկայացմամբ:

15. Ցեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակում Երևանի հհ.8,74,108,132 դպրոցներում կազմակերպվել է ասորի, հույն, եզդի ժողովուրդների ցեղասպանության վերաբերյալ քննարկումներ:

Աշակերտները ամեն ամսվա 24-ին մասնակցում են ֆլեշմոբին, որն անցկացվում է Ծիծեռնակաբերդում:

16. Դպրոցների աշակերտների համար «Նաիրի» կինոթատրոնում ցուցադրվել է «Ճամբարում» կինոնկարը:

17. Ազգային փոքրամասնություն աշակերտների հետ տարվող աշխատանքներն ունեն շարունակական բնույթ:

Նորք-Մարաշ վարչական շրջանի մասով՝

Նորք-Մարաշ վարչական շրջանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները վարչական շրջանի ղեկավարի հրավերով մշտապես մասնակցում են Նորք-Մարաշ վարչական շրջանում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Նոր Նորք վարչական շրջանի մասով՝

Ամեն տարի մայիսի 28-ին Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը «Եզդիների միություն» ՀԿ – ի հետ համատեղ կազմակերպում է միջոցառում՝ նվիրված Սարդարապատի ճակատամարտի հաղթանակին, որին մասնակցում են նաև արտերկրից ժամանած եզդիներ:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մասով՝

«Հաղթանակ» զբոսայգու «Հրեական ծառուղի»-ում առկա հուշարձանին հարող տարածքում իրականացվել է ծառատունկ: Նշված տարածքի խնամքն ու սպասարկումը իրականացվում է վարչական շրջանի կողմից:

Զբոսայգում առանձնացված հատվածում քրդական համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ տնկվել է 150 ծառ, որոնց խնամքն ու սպասարկումը նույնպես իրականացվում է վարչական շրջանի կողմից:

Վերոհիշյալ համայնքների մի շարք սոցիալապես անապահով ընտանիքներ և անհատներ ընդգրկված են մարդասիրական տարբեր ծրագրերում, օգտվում են վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարաններից:

Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպության ներկայացուցիչները պարբերաբար հրավիրվում են մասնակցելու վարչական շրջանում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին:

Մալալաթիա–Սեբաստիա վարչական շրջանի մասով՝

Մալալաթիա–Սեբաստիա վարչական շրջանում բնակվող ազգային փոքրամասնություններ ներկայացնող /ռուս, ուկրաինացի, եզդի/ 295 ընտանիքների՝ սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում տրամադրվել է բնաիրային, գրենական, առողջապահական, ֆինանսական, խորհրդատվական օգնություն:

Էրեբունի վարչական շրջանի մասով՝

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից իրականացվող բոլոր տոներին և հիշատակի օրերին նվիրված մշակութային, սպորտային միջոցառումներին և սոցիալական ծրագրերին մասնակից են վարչական շրջանի տարածքում բնակվող եզդիական համայնքի ներկայացուցիչները /եզդիները/: Մասնավորապես, յուրաքանչյուր տարի 8-10 երեխա ամառային հանգիստը վայելում է «Հեքիաթների կիրճ» առողջարարական ճամբարում:

Կենտրոն վարչական շրջանի մասով՝

Երևանի օղակաձև զբոսայգու 3-րդ հատվածում /Նալբանդյան-Իսահակյան փողոցների հատույթում/ ս/թ ապրիլի 21-ին տեղի կունենա եզդի ժողովրդի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող աշխարհում առաջին հուշարձան-կոթողի բացման արարողությունը:

Ավան վարչական շրջանի մասով՝

Ավան վարչական շրջանում բնակվող ազգային փոքրամասնությունները պարբերաբար ընդգրկվում են իրականացվող բոլոր սոցիալական ծրագրերում՝ ամանորյա սննդի փաթեթների, գրենական պիտույքների, վառելափայտի տրամադրում, ամառային հանգստի կազմակերպում:

Շենգավիթ վարչական շրջանի մասով՝

Տեղի է ունեցել Շենգավիթ վարչական շրջանում գտնվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ձեռագործ աշխատանքների և նկարների ցուցահանդես: Տեղի է ունեցել ազգությամբ քուրդ, «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալի դափնեկիր Յաշար Քեմալի «Արյան կանչը» գրքի քննարկումը, որի ժամանակ հայ ընթերցողը ծանոթացել է գրողի կենսագրականին, ինչպես նաև տեղեկացվել է այն մասին, որ նրա շնորհիվ 1951 թ.-ին կասեցվեց Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու ոչնչացման թուրքական իշխանությունների ծրագիրը: